այդպէս մնացել:

Յունականի հետ նմանութիւնը լրացնելու համար ճապոն դերասանն էլ այնպէս ձիգ ու փայտի պէս է ման գալիս, ինչպէս ոտքին կօտուրն հագած յոյն դերասանը, իսկ խօսուածքը նոյնպէս միշտ ուռած, ճարտասանական ու միշտ անբնական մի շեշտով:

Կանանց դերերը կատարում են բացառապէս տղամարդիկ, եւ ճիշտն ասած՝ խիստ աջող:

Կնոջ դերը խաղացող դերասանին նայելով, բնաւ չի կարելի ենթադրել, որ դա տղամարդ է. այն աստիճան կանացի են նրա ձայնն ու շարժումները: Կինը միայն վերջերս է սկսում բեմ դուրս գալ, բայց դեռ խիստ հազւագիւտ դէպքերում: Թէև ճապոնացին շատ է սիրում իր թատրոնը, բայց դերասանի պաշտօնը յարգանք չունի նրա աչքում: Եւ ընդհանրապէս ճապոնական թատրոնը ռամկական հիմնարկութիւն է համարւում. յաճախողը ամենահասարակ ժողովուրդն է. իսկ ազնուականներն ու բարձր դիրք ունեցող անձնաւորութիւնները գնում են ծպտուած:

Վերջերս ի հարկէ սկսել է արդէն մուտք գործել եւրոպական բեմը իր Համլետներովն ու համերգներով: Կան արդէն յայտնի դերասաններ ու դերասանուհիներ, որոնցից մասնաւորապէս մեծ հռչակ ունի դերասանուհի Սադօ-Եակօ, որ մինչեւ անգամ Պարիզում մեծ աջողութիւն է ունեցել վերջին ցուցահանդիսի ժամանակ: